ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 375002, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

«06 » նոյեմբերի 2009թ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 26/04
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ԽՈՐՀՐԴԻ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի արտահերթ
ընդհանուր ժողով հրավիրելու մասին:

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21^{6}-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը՝

խորհուրդը որոշեց.

1. Հեռակա կարգով քվեարկության միջոցով գումարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերի ցուցակը կազմելու օր ընդունել 2009 թվականի նոյեմբերի 02-ը:
3. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը (կցվում է):
4. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը (կցվում է):
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին ծանուցման ձևը (կցվում է), բաժնետերերին ծանուցել և քվեաթերթիկները տրամադրել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտել 2009 թվականի դեկտեմբերի 15-ին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի նոյեմբերի 06-ից:

Խորհրդի նախագահ՝ Բ. Բեգլարյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի
արտահերթ ընդհանուր ժողովի

1. «Գրանթ Թորնթոն Ամիօ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2009 թվականի աուդիտն իրականացնող անձ հաստատելու մասին: